



ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

2014-2015թթ. Արտաքին կապերի բաժնի գործունեության հաշվետվություն

ՀՀ ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն»-ի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում «Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամ»-ի ֆինանսավորմամբ «ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում /ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ/ լրացուցիչ հեռավար շարունակական կրթության կազմակերպում» ծրագրի /այսուհետ՝ Հեռավար ծրագիր/ շրջանակներում 2014թ. մայիսի 12-ից 16-ը ծրագրի խորհրդատուներ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Արտաքին կապերի բաժնի պետ Ա. Հարությունյանը, Կրթության որակի ապահովման բաժնի պետ Ն. Վարդանյանը, և Ռադիոտեխնիկա և կապ ամբիոնի վարիչ Տ. Զաքարյանը Աթենքի Կապի և տեխնոլոգիաների համալսարանի հրավերով գործուղվեցին Աթենք, որտեղ, բացի տարբեր գործնական հանդիպում-քննարկումներից, մասնակցել են նաև հնգօրյա վերապատրաստման դասընթացներին և ծանոթացել հեռավար կրթության կազմակերպման հունական փորձին: Ծրագրի մասնակիցների խոսքով՝ գործուղման կարևորագույն ձեռքբերումներից է Հունաստանի հեռավար կրթության կազմակերպման գործում մեծ փորձ ունեցող «Արնոս» ընկերության հետ հետագա համագործակցության վերաբերյալ հուշագրի ստորագրումը:

Մինևույն ծրագրի շրջանակներում Պարմայի համալսարանի պրոռեկտոր, հեռավար կրթության կազմակերպման գծով փորձագետ Աննա Մարիա Թամմարոն հրավիրվել է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ և քառօրյա վերապատրաստում անցկացրել ՀՀ ԳԱԱ դասախոսների, անձնակազմի, ինչպես նաև այլ ԲՈՒՀ-երի ներկայացուցիչներին, որի շրջանակներում 36 մասնակից ստացան մասնակցության հավաստագիր:

Մինևույն ծրագրի շրջանակներում 2014թ. սեպտեմբերի 15-ից 19-ը ՀՀ ԳԱԱ աշխատանքային թիմը այցելեց Պարմայի համալսարան, Իտալիա: ՀՀ ԳԱԱ աշխատանքային թիմը այցելություն կատարեց Պարմայի համալսարանի Տեղեկատվության ինժեներիայի ֆակուլտետ, որտեղ մասնակիցներին ներկայացրեցին հեռավար կրթության իրանացման պատմությունը իրենց համալսարանում և Տեղեկատվության ինժեներիայի ֆակուլտետի դերակատարությունը հեռավար կրթության ոլորտում: ՀՀ ԳԱԱ Արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը հակիճ ներկայացրեց ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն, Կենտրոնի գործունեությունը առ այսօր և մասնավորապես Հեռավար ծրագրի իրականացման ընթացքը: Մասնակիցները քննարկեցին

